ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 հուլիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

109
(2775)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲՀԿ-ԻՑ՝ ՔՊ. ԲԱԳՐԱՏՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանը 2022 թվականին երկու հողամաս է վաճառել: Հետաքրքիր է, որ օգոստոսի 15-ին կատարված գործարքի վերաբերյալ տվյալներում օտարված գույքերից մեկի դիմաց գրված է 155 դրամ, մյուսինը՝ 2,28 դրամ: Թե ինչ են նշանակում այս թվերը, կարելի է ենթադրել. կեղծ գործարք: Իսկ, ահա, տարեվերջին Սերգեյ Բագրատյանի միակ անշարժ գույքը եղել է Երեւանի կենտրոնում գտնվող համատեղ սեփականությամբ բնակարանը, որը նա ձեռք էր բերել դեռ 2009 թվականին: Սերգեյ Բագրատյանը մեքենա չունի՝ ըստ փաստաթղթերի, հայտարարագրում միայն նշված է «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի մասին: Խոսքը հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող տրանսպորտի միջոց կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտի միջոցի մասին է, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն: Պատգամավորի բանկային հաշիվներին տարվա վերջում 2 մլն 687 հազար դրամ է եղել, իսկ կանխիկ դրամի մասին տեղեկություններ առհասարակ առկա չեն: Մեկ տարվա ընթացքում պատգամավորի եկամուտը կազմել է 8 մլն 445 հազար դրամ, որից 8 մլն 316 հազարը նրա պատգամավորական աշխատավարձն է, 42 հազար դրամը նա ստացել է Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսահրավագիտական համալսարանից եւ եւս 86 հազար դրամ էլ նա ստացել է «ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկից: Պատգամավորի ծախսերի մասին տեղեկություններ առհասարակ հայտարարագրում առկա չեն: Ինչ է ծախսել, ինչպես է ապրել՝ չի երեւում: Նշվում է, որ Սերգեյ Բագրատյանը 2002 թվականից հանդիսանում է «Սերգեյ Գրուպ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետեր եւ 1,98 տոկոս բաժնեմաս ունի «ԲիէսԲի» ՍՊԸ-ից: Սերգեյ Բագրատյանը հայաստանյան քաղաքական դաշտում եզակի գործիչներից է, որ «ղազագիր» էր գրել... Հիշեցնենք, որ համացանցում հայտնվել էր օպերատիվ նկարահանումից բացառիկ փաստաթղթերի կադրեր, որտեղ ԲՀԿ-կան պատգամավորները, երդում ու հայհոյանք ուտելով, իրենց պատրաստակամությունն են հայտնել Ծառուկյանին աջակցելու:

«Ես՝ Սերգեյ Բագրատյանս, առաջադրվելով ԲՀԿ ռեյտինգային ցուցակով, պարտավորվում եմ ապահովել 7000 ձայն իմ անունով:

Այս պայմանավորվածությունից հրաժարավողը անբարոյականի զավակ է»: Նա, սակայն, նետվեց Փաշինյանի գիրկը:



Հուլիսի 25-ին տեղի էր ունեցել ՔՊ վարչության նիստ՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ փակ նիստից: Նախ՝ տեղեկացանք, որ նիստը 2 ժամից ավելի է տեւել ու բավականին թեժ է անցել՝ կապված հատկապես ավագանու ընտրությունների հետ: Բանն այն է, որ ՔՊ-ականներին դեռ չի հաջողվում վերջնական որոշում կայացնել Արմեն Փամբուխչյանի տեղակալների հարցով. տարբեր անուններ շրջանառվում են, բայց դեռ հստակ որոշում չունեն: Ինչպես մեր աղբյուրներն ասացին, այս հարցում վերջնական խոսքն Ավինյանինն է: ՔՊ վարչության նիստին, որքան էլ տարօրինակ է, որեւէ անդրադարձ չի եղել Արցախում ստեղծված աղետալի իրավիճակին, անվտանգային հարցերին եւս անդրադարձ չի եղել, քննարկվել են բացառապես ներկուսակցական հարցեր՝ կուսակցության անդամակցության եւ ավագանու ընտրությունների հետ կապված: Հիշեցնենք, որ ՔՊ կուսակցականները 3000 հոգի են՝ ըստ ԿԸՀ կայքի: ՔՊ-ին չի հաջողվում այդ թիվը մեծացնել:



Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը 2023 թվականի հունվարից հունիս ամիսները ընկած ժամանակահատվածում «Սեւան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին որպես դրամաշնորհ փոխանցել է 359 մլն 191 հազար դրամ: Նախորդ տարի՝ 2022 թվականին, դրամաշնորհային ծրագրով «Սեւան» ազգային պարկ ՊՈԱԿ-ին նույն ծրագրով փոխանցել են 565 մլն 390 հազար դրամ: Կառավարության որոշումներով նման միլիոններ ուղղում են ազգային պարկերին, որոնց արդյունավետությունը նկատելի չէ: Օրեր առաջ ArmLur.am-ը անդրադարձել էր «Սեւան» ազգային պարկի տարածքում ծառերի վիճակին. դրանք պատված էին թրթուռներով եւ վարակված էին, ծառերը կանգնած են ոչնչացման վտանգի առաջ: Այդ իրավիճակում անհասկանալի է, թե ինչի համար են բյուջեից անարդյունք մսխվող ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայում: Իսկ ««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին Շրջակա միջավայրի նախարարությունը վերջին երկու տարվա ընթացքում փոխանցել է 330 մլն 892 հազար դրամ է հատկացրել անվերադարձ: Թվում էր, թե այսպիսի գումարներից հետո բարեկարգ վիճակի ականատես պետք է լինենք, բայց փոխարենը հաճախ ազգային պարկում ականատես ենք լինում կերուխումից հետո թողած թափոնների, նշված տարածքում հանգստյան գոտիների կառուցման, ծառահատումների: Այսինքն՝ նախարարությունը կարեւորն անկարեւորից չի տարանջատում, եւ գումարները, որ պետք է ծառայեն՝ ի նպաստ բնության, հօդս են ցնդում:

Վերջին օրերին ակնհայտ է, որ Երեւանի քաղաքային իշխանությունները չեն կարողանում կառավարել աղբահանության հարցը եւ գրեթե ամենուր նկատվում են աղբի կուտակումներ: Քաղաքապետարանի մեր աղբյուրները պատճառաբանում են, որ իրավիճակի «մեղավորը» դեռեւս 2019թ-ին ձեռք բերված «Կամազ» մակնիշի ավտոմեքենաներն են, որոնց տվյալ մոդիֆիկացիան մեր պայմաններին հարմար չէ: Ըստ նույն աղբյուրի՝ մեքենաների անհամապատասխանության մասին դեռեւս այն ժամանակ զգուշացնում էին Հայկ Մարությանի թիմին, որտեղ, սակայն, հավաքված էին հիմնականում քաղաքային տնտեսության առանձնահատկություններից անտեղյակ մարդիկ: Փողոցում աղբահանությամբ զբաղվող աշխատակիցներից մեկը մեզ կես կատակ, կես լուրջ ասաց, որ լավ է՝ էս ավտոները գոնե 2 տարի աշխատեցին, դրա հույսն էլ չկար, որովհետեւ հենց նոր բերեցին, «արդեն մեջները չաշխատողներ կային»: Ի դեպ, ըստ որոշ տեղեկությունների՝ տեխնիկայի ձեռք բերման նպատակահարմարության մասով, հնարավոր է, գործն ուղարկվի իրավապահ մարմիններին: Հիշեցնենք, որ Հայկ Մարությանի ժամանակ ձեռք բերված այս մեքենաների մասով մամուլում եւ սոցցանցերում եղան բազմաթիվ հրապարակումներ, մի մասն, ըստ էության, հաղորդում էր հանցագործության մասին, մասնավորապես՝ Դավթաշեն վարչական շրջանի նախկին ղեկավար Ռուսլան Բաղդասարյանը նշում էր, որ 60 մլն դրամ անհետացել է ՌԴ-ից 5 հատ «Կամազ» մակնիշի ավտոմեքենաներ գնելու գործարքի հետեւանքով:

ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ Է

ԷԴԳԱՐ ՀԱԿՈԲՅԱՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը որոշ ժամանակ առաջ գրել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի գրասենյակի գործունեությունը դադարեցվել է, իսկ լուծարման պատճառը դարձյալ ընտրակեղծիքներն են եղել:

Գրել էինք, որ Մալաթիայում ՔՊ-ն թեւերի է բաժանված եղել. մի թեւն ուղղորդվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի կողմից, մյուս թեւը՝ ՔՊ-ական պատգամավոր, վարչապետի տիկնոջ ազգական, Մալաթիա-Սեբաստիայի տարածքային կառույցի խորհրդի նախագահ Էդգար Հակոբյանի կողմից: ՔՊ տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների ընտրությունների ժամանակ կողմերը իրենց ցանկալի մարդկանց ցուցակներ են տվել շարքային ՔՊ-ականներին, որպեսզի ընտրեն, եւ այդ կեղծիքը պատահաբար բացահայտվել է:

Պատգամավոր Էդգար Հակոբյանն իր համար է ցանկալի ցուցակ տվել, իսկ թաղապետ Բարխուդարյանը՝ իր, ու երբ բացահայտվել են կեղծիքները վերստուգիչ հանձնաժողովի անդամների կողմից, որոշվել է կասեցնել կուսակցության գրասենյակի գործունեությունը մինչեւ տարածքային կառույցի խորհրդի նախագահի եւ անդամների նոր ընտրությունները՝ ավելի հարթ պայմաններում:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, երեկ ՔՊ վարչության նիստ է տեղի ունեցել, որի ժամանակ հաստատվել է Մալաթիա-Սեբաստիա տարածքային կազմակերպության խորհրդի նախագահի պաշտոնում առաջադրված Էդգար Հակոբյանի ընտրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է պատգամավոր Էդգար Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, Մալաթիայի ՔՊ տարածքային խորհրդի ընտրություններից բարձրացած մեծ աղմուկից հետո երեկ ընտրվեցիք խորհրդի նախագահ: Ինչպե՞ս ստացվեց, որ վերջապես համաձայնության եկաք, միաձա՞յն եք ընտրվել խորհրդի նախագահ, թե՞ տարաձայնություններ են եղել:

-Տեխնիկական խնդիր էր եղել, կեղծիքներ չէին եղել, խորհրդի կազմի ընտրությունները հետաձգվել էին: Ես միաձայն եմ ընտրվել, ոնց որ կարգն է, ընտրություններն անցել են, տարակարծություններ չեն եղել իմ թեկնածության շուրջ:

-Ընտրակեղծիքների բացահայտումից հետո Մալաթիա-Սեբաստիայի ՔՊ տարածքային կառույցի շտաբը լուծարվել էր. հիմա ի՞նչ իրավիճակ է, արդեն գործո՞ւմ է շտաբը:

-Շտաբը չէր լուծարվել. քանի որ գործող խորհրդի լիազորությունների ժամկետը լրացել էր, պետք է նոր ընտրություններ լինեին, այդ ընթացքում հանգիստ էր, նիստեր չէին լինում, բայց հիմա կառույցը նորմալ գործում է:

-Ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների՝ Ձեր եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի հարաբերությունները, կառույցի խորհրդի նախագահի եւ կազմի ընտրություններով պայմանավորված, լարվել են, քանի որ նա իր համար ցանկալի մարդկանց ցուցակ է ներկայացրել, իսկ Դուք Ձեր ցուցակն եք ներկայացրել, որպեսզի այդ մարդկանց ընտրեն. ի՞նչ կասեք այս մասին:

-Տարաձայնություններ մեր միջեւ չեն եղել եւ չկան, ասեմ ավելին՝նա չի էլ առաջադրվել որպես խորհրդի նախագահի թեկնածու, ինչո՞ւ պետք է տարաձայնություններ լինեին: Ինքն ի սկզբանե ասել էր, որ չի առաջադրվելու կառույցի խորհրդի նախագահի պաշտոնում:

-Նա չի առաջադրվել, բայց փորձել է իր համար ցանկալի ցուցակ ներկայացնել, ինչի հետ Դուք համաձայն չեք եղել, սրանից էլ տարաձայնություններ են առաջացել ձեր միջեւ:

-Նման բան չի եղել, մամուլում գրված էր, որ մրցակցություն կա մեր միջեւ, բայց եթե ինքն անգամ չի էլ առաջադրվել՝ որպես խորհրդի նախագահի թեկնածու, ինչի՞ն էր պետք ցուցակ ներկայացնել: Չկա նման բան, կառույցի խորհրդի նախագահի գործը այնպես չի, որ հեշտ է, ծանր գործ է, այդքան բնակիչների հետ աշխատում ենք: Այնպես որ, դժվար թե, մարդ ցանկանա՝ խախտում անի, որպեսզի կառույցի խորհրդի նախագահ ընտրվի. դա ուղղակի լրացուցիչ բեռ է ու պատասխանատվություն:

-Պարոն Հակոբյան, արդեն որոշվե՞լ է՝ Մալաթիա-Սեբաստայում ՔՊ նախընտրական շտաբը որտեղ է լինելու, ով է շտաբը ղեկավարելու:

-Շտաբները դեռ չեմ կարող ասել, չգիտեմ, շտաբի ղեկավարն էլ դեռ չգիտենք, նման քննարկումներ չենք ունեցել:

Զրուցեց ԶՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՂԵԿԻՆ ԵՂԵԼ Է ՎԱՐՈՐԴԸ

Կառուցապատողների հայկական ասոցիացիայի հիմնադիր եւ խորհրդի անդամ Վահե Պետրոսյանը վթարից րոպեներ հետո հայտնվեց Բաղրամյան պողոտայում: Իսկ ո՞վ է նա: Հիշեցնենք, որ երեկ անհետ կորած զինծառայողների ծնողները փակել էին Պռոշյան- Բաղրամյան պողոտան, եւ այդ խառնաշփոթ իրավիճակում «Մայբախ» մակնիշի մեքենան վթարի ենթարկեց պարեկին: Մենք պարզեցինք որ 01PO 011 համարանիշով, «Մայբախ» մակնիշի մեքենան պատկանում է Կառուցապատողների հայկական ասոցիացիայի հիմնադիր եւ խորհրդի անդամ Վահե Պետրոսյանին, սակայն ղեկին եղել է Վահե Պետրոսյանի վարորդը: Նկատենք, որ դեպքից րոպեներ հետո մի խումբ անձանց հետ դեպքի վայր եկավ հենց Կառուցապատողների հայկական ասոցիացիայի հիմնադիր եւ խորհրդի անդամ Վահե Պետրոսյանը, զրուցեց ոստիկանների հետ ու գնաց:

Հիշեցնենք նաեւ, որ դեռեւս 2 տարի առաջ Վահե Պետրոսյանը աչքի ընկավ իր հայտարարություններով՝ եկամտահարկի վերադարձի օրենքի նախագծի շուրջ: Նա հայտարարել էր, որ սա ցնցում կառաջացնի շուկայում:

«Եթե եկամտահարկի վերադարձի օրենքի նախագիծն այդ տեսքով ընդունվի, 2 տարի հետո՝2024 թվականից սկսած, քաղաքաշինական ծրագրերի տեմպերն էական՝70-80 տոկոսով անկում կունենան: Ըստ նրա՝դրա հետեւանքները կլինեն արտագնա աշխատանքի գնացող հազարավոր մարդիկ, շինարարական արտադրանքի արտադրությունների դադարեցումը եւ այլն: Հիշեցնենք, որ կառավարությունը որոշել է փոփոխություններ կատարել եկամտային հարկի վերադարձի ծրագրում՝ պատճառաբանելով, որ այդ ծրագիրը բյուջեի համար ծանր բեռ է դարձել:

Ըստ շրջանառվող նախագծի, որն արդեն հավանության է արժանացել կառավարության կողմից եւ դեռեւս պետք է քննարկվի Ազգային ժողովում, առաջարկվում է ծրագիրը Երեւանում աստիճանաբար դադարեցնել մինչեւ 2025 թվականը եւ թողնել միայն մարզերում:

ԿՀԱՄՆԻ՞ ԱՐՑԱԽ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի իշխանական աղբյուրներից տեղեկացավ, որ Երեւանից Արցախ շարժվող տասնյակից ավելի հումանիտար օգնություն տեղափոխող բեռնատարները, հնարավոր է, այդպես էլ չհասնեն արցախցիներին, քանի որ Ադրբեջանը ցանկացած միջոց կձեռնարկի, որպեսզի բեռները տեղ չհասնեն: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝Հայաստանի իշխանությունները հերթական թատերական բեմականացումն են ցուցադրում, հատկապես՝երեկվա համաժողովրդական հանրահավաքից եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ասուլիսից հետո: Հավելենք, որ Արցախում հումանիտար ճգնաժամի կառավարման աշխատանքային խմբի ներկայացուցիչ Վարդան Սարգսյանն երեկ լրագրողների հետ զրույցում ասել է, որ դիմել են ՌԴ խաղաղապահ ուժերին հումանիտար օգնությունը Արցախ առաքելու նպատակով: Ըստ նրա՝ հումանիտար օգնության բեռնատարները 19-ն են: Բեռներում հիմնականում ալյուր է, ձեթ, մանկական սնունդ, մակարոնեղեն, առաջին անհրաժեշտության սննդամթերք: Դեղորայք չկա: Հիշեցնենք, որ Հայաստանը Արցախ է ուղարկում 400 տոննա հումանիտար օգնություն, բեռը կհասցվի մինչեւ Կոռնիձոր, այնուհետեւ խաղաղապահների միջոցով կփոխանցվի արցախցիներին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔ

ԱՐԴՅՈՔ ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵ՞Տ ԷԻՆ

Ստեփանակերտի Վերածննդի եւ Երեւանի Ազատության հրապարակներում տեղի ունեցան համաժամանակյա հանրահավաքներ: Համաժողովրդական շարժման մասնակիցները մեծ էկրաններով օնլայն ռեժիմով կամրջեցին երկու հրապարակները՝ միավորելու բոլորի ձայները եւ վերահաստատելու միասնական պայքարը:

Հանրահավաքի ժամանակ պահանջներ ներկայացվեցին Հայաստանի իշխանություններին եւ միջազգային հանրությանը:

«Ժողովուրդ» օրաթերթն այս մասին զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ՝ պարզելու համար, թե ինչ է նախատեսվում այսօրվա հանրահավաքի ընթացքում, եւ արդյոք գոհ են երեկվա համաժամանակյա հանրահավաքից:

«Ընդհանուր առմամբ, ամեն ինչ նորմալ էր, իհարկե, շատ ավելի ցանկալի կլիներ, որ Երեւանում էլ շատ մարդիկ հավաքվեին, որովհետեւ սա, ի վերջո, որոշում է հայ ժողովրդի ճակատագիրը: Մեզ համար շատ կարեւոր է, որ մեր ժողովրդի կարծիքը իմանանք, իսկ ժողովրդի կարծիքը իմանում ենք նաեւ այսպիսի հանրահավաքներում:

Մենք երեկ Նիկոլ Փաշինյանին ներկայացրել ենք մեր պահանջները հանրահավաքի ժամանակ, Արցախի պետնախարարն է դրա մասին խոսել, եւ դա իր անձնական մոտեցումը չէր, այլ պետության: Մենք անթույլատրելի ենք համարում որեւէ քայլ, որը ուղղված կլինի Արցախն Ադրբեջանին բռնակցելուն. սա խայտառակություն է, ազգային արժեքների ոտնահարում, եւ երբեք չպետք է տեղի ունենա:

Արցախում ակցիաները շարունակվում են շուրջօրյա իրականացվել, բայց այսօրվա համար դեռ կոնկրետ օրակարգ նախատեսված չէ:

Կարեւոր է, որ Հայաստանում էլ մարդիկ հասկանան, որ ժամանակը եկել է, որ իրենց ձայնը բարձրացնեն եւ ստիպեն կառավարությանը, որպեսզի չշեղվեն ազգային շահերից: Սա արդեն ոչ թե ներքաղաքական խնդիր է կամ աթոռակռիվ, այլ նման քաղաքականությունը, որը վարում է պաշտոնական Երեւանը, բերելու է ողբերգության, եւ դա փաստ է: Դե հիմա եթե ուզում են կոտորվել, թող կոտորվեն, ինչ ասեմ. եթե պետք է մենք զինանշանը փոխենք, որ առյուծ չկա այստեղ, դե թող ոչխար դնեն, որ ավելի ճիշտ լինի. դա՞ են ուզում: Ես կարծում եմ, որ, ամեն դեպքում, ժողովուրդն իր կարծիքը պետք է արտահայտի: Երբ Երեւանում փակում էին փողոցներ իշխանափոխության համար, դա լավ էր, ազգային շահի համար լավ չի՞. փողոց չէ, ամբողջ Երեւանը պետք է փակվի»:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

«Այստեղից չենք գնալու, մինչեւ Նիկոլ Փաշինյանը մեզ չընդունի. թե մեկ շաբաթ կտեւի, թե 10 օր կտեւի, մենք պետք է տեսնենք իրեն»,- հուլիսի 26-ին՝ Բաղրամյան 26-ի դիմաց բողոքի ակցիայի ժամանակ, նշեց անհետ կորած զինծառայողների ծնողներից մեկը: Նրանք փակել են Բաղրամյան պողոտան:

«Ինձ թվում է՝ մենք շատ ժամանակ չենք խլի իրենից, մեզ հետաքրքրող երկու հարց կա՝ մեր տղերքի հարցը, որ անհայտ բացակայող են, եւ ձգձգվող դատական պրոցեսը: Դատական պրոցեսից ակնկալիքը այնպիսին է, որ իրենք չեն ուզում պատիժներ կիրառել: 35 տղաներ անհետ կորած են, ու Անդրանիկ Մակարյանն (խոսքը ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ Անդրանիկ Մակարյանի մասին է - խմբ.) անգամ կալանքի տակ չէ: Երեւի բարեկամական կապ կա վարչապետի հետ, ես չգիտեմ: Մենք ուզում ենք, որ հետեւողական լինեն դատական պրոցեսին, հաճախ լինի, վկաները գան, պատմեն՝ ոնց է եղել»,- ասաց նա:

Անհետ կորածի մոր խոսքով՝ ամենաահավորն այն է, որ իրենք չգիտեն, թե որտեղ են իրենց որդիները, ինչ կարգավիճակում են. «Խծաբերդից գերեվարվածներին Ադրբեջանը համարեց ահաբեկիչ, բա պատերազմի ընթացքում գերեվարվածներ չունե՞նք մենք, ռազմագերիներ չունե՞նք: Ռազմի դաշտում գերի ընկածներն ո՞ւր են:

Ամեն տեղ մեզ ասում են՝ աշխատում ենք: Բա ե՞րբ է այդ աշխատանքը վերջանալու. նրանք պարզապես չեն աշխատում: Երեկ ասուլիսում քննարկում էին սմբուկի ու բամիայի հարցը. ուրեմն էս տղերքի հարցը թողել, ընկել էին բադրջանի հետեւի՞ց: Մենք բավականին շատ անհետ կորածներ ունենք»,-ասաց կինը:

Նշենք, որ ակցիային մասնակցում են Էջմիածնի N զորամասի («Քիմիկների զորամաս») զինծառայողների ծնողները, որոնց զավակներին 2021 թվականի հոկտեմբերի 21-ին տեղափոխել էին Արցախ՝ մարտական առաջադրանքի, եւ սխալ հրամանի պատճառով նրանք հայտնվել էին շրջափակման մեջ ու անհետ կորել:

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

ՆԱԽԱԳԱՀԸ ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ՆՍՏԱՑՈՒՅՑԸ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը սոցցանցի իր էջում գրում է. «Ի շարունակություն հուլիսի 17-ին հայտարարած որոշման՝ Վերածննդի հրապարակում մեկնարկած նստացույցին միանալու մասին՝ կուզեի ընդգծել հետեւյալ միջանկյալ արդյունքներն ու հետագա անելիքները.

1. Այս ընթացքում հրապարակային ու փակ ձեւաչափով գործադրված մեր ջանքերի ու իրականացված միջոցառումների արդյունքում Ադրբեջանի վրա միջազգային ճնշումը մեծացել է, ինչը դրսեւորվել է նաեւ մի շարք միջազգային հայտարարություններով ու գործողություններով:

2. Մեզ հաջողվել է բարձրացնել միջազգային իրազեկվածության եւ ուշադրության մակարդակը: Այդ ուղղության գլխավոր միջոցառումը դարձավ հուլիսի 24-ին կայացած իմ հրատապ մամուլի ասուլիսը, որին մասնակցել է բավականին պատկառելի կազմ՝ միջազգային ու սփյուռքյան շուրջ 100 լրագրող 35 երկրից, այդ թվում՝ աշխարհի ամենառաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Ասուլիսի արդյունքներն արդեն երեկվանից դրսեւորվում են տարբեր հրապարակումների տեսքով:

3. Հաշվի առնելով ստեղծված ծանրագույն իրավիճակը եւ օգտագործելով մամուլի ասուլիսի ընձեռած հնարավորությունը՝ դրա ընթացքում Արցախը հայտարարել եմ աղետի գոտի՝ միջազգային հանրությանը կոչ անելով հրատապ հումանիտար աջակցություն ցուցաբերել: Դրա առաջին արձագանքը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն է՝ Արցախի ժողովրդին աղետից փրկելու նպատակով այսօր Արցախ մեծաքանակ հումանիտար աջակցություն ուղարկելու մասին: Կամ Ադրբեջանը կբացի Լաչինի (Քաշաթաղի) միջանցքը այդ հումանիտար աջակցության առջեւ, կամ աղետի գոտի հումանիտար բեռների մուտքի հերթական արգելքով, ի լուր աշխարհի, լրացուցիչ կերպով կվերահաստատի իր քաղաքականության ցեղասպանական էությունը:

4. Կոչ ենք անում այլ պետություններին ու միջազգային կազմակերպություններին (առաջնահերթորեն՝ ՄԱԿ-ի համապատասխան գործակալություններին) հետեւել Հայաստանի Հանրապետության օրինակին եւ Արցախի ժողովրդին մատակարարել հրատապ հումանիտար աջակցություն՝ իրենց ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

5. Նաեւ մեր ջանքերի արդյունքում երեկ Մոսկվայում տեղի է ունեցել Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների եռակողմ հանդիպում, որի արդյունքները, սակայն, մեզ համար ընդունելի չեն:

6. Միաժամանակ, սպասում ենք առաջիկա օրերի ընթացքում տեղի ունենալիք այլ հանդիպումների ու միջոցառումների, որոնք, հուսանք, շոշափելի արդյունքներ կապահովեն այս աղետալի իրավիճակի վերացման հարցում: Այդ առումով մենք ցուցաբերում ենք համապատասխան նախաձեռնողականություն ու պատասխանատվություն մեր ունեցած սահմանափակ հնարավորությունների շրջանակներում:

7. Կոչ ենք անում Հայաստանի Հանրապետության իշխանություններին առավելագույն ջանքերը գործադրել Արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի հրամանի կատարման եւ Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորման հարցով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին անհապաղ դիմելու եւ շոշափելի արդյունքներ ապահովելու ուղղությամբ:

8. Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի մեր հայրենակիցներին խնդրում ու հորդորում ենք հետեւողական ջանքերով հնարավորինս մեծացնել ճնշումը միջազգային հանրության հիմնական դերակատարների, հատկապես՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների (Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ու Չինաստանի) կառավարությունների, ինչպես նաեւ ՄԱԿ-ի կառույցների ու Եվրոպական Միության նկատմամբ՝ կիրառելով բոլոր հնարավոր միջոցներն ուշադրություն հրավիրելու եւ հրատապ գործողության մղելու նպատակով: Դրանք կարող են ներառել քաղաքացիական անհնազանդության, իրազեկման, բողոքի եւ այլ ակցիաներ՝ օգտագործելով թույլատրելիության սահմաններում կոշտ ու ոչ ստանդարտ մեթոդներ:

9. Լաչինի միջանցքի բացման ուղղությամբ ճնշումը պետք է մեծանա՝ եւ՛ քաղաքական, եւ՛ հումանիտար, եւ՛ հնարավոր այլ գործիքակազմերի կիրառմամբ: Այդ առումով Արցախի իշխանությունները քննարկում են բոլոր հնարավոր սցենարներն ու քայլերը ըստ զարգացումների կիրառելու նպատակով:

10. Համարելով, որ իմ նստացույցը, համաժողովրդական շարժումը եւ մնացած բոլոր ջանքերն արդեն որոշակի արդյունք են ապահովել միջազգային ուշադրություն հրավիրելու եւ գործնական քայլերի մղելու հարցում՝ որոշել եմ դադարեցնել նստացույցը եւ շարունակել ջանքերս աշխատանքային արտակարգ ռեժիմով: Միեւնույն ժամանակ, համաժողովրդական շարժման շրջանակներում շարունակվում են նստացույցներն ու այլ ակցիաները մեր այլ հայրենակիցների կողմից, իսկ ես պարբերաբար հանդիպումներ եմ ունենալու նրանց հետ եւ համատեղ քննարկելու ենք մեր անելիքները»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Արցախի Հանրապետության նախագահի նախաձեռնությամբ՝ 2023 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 16:00-ին, Արցախի Հանրապետության Ազգային ժողովն արտահերթ նստաշրջան կգումարի:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Արցախի ԱԺ-ից:

ՊՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է

Հուլիսի 26-ին ՀՀ ռազմական կցորդների ամենամյա հավաքների շրջանակում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանդիպում է ունեցել արտերկրում հավատարմագրված ՀՀ ռազմական կցորդների հետ:

ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրությունից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ հանդիպման ընթացքում ռազմական կցորդները ներկայացրել են իրենց կատարած աշխատանքները: Նախարար Պապիկյանը ռազմական կցորդներին ներկայացրել է ՊՆ բարեփոխումների ընթացքը, հիմնական ուղղությունները եւ, ամփոփելով հավաքները, տվել է համապատասխան հանձնարարականներ:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽԻՆ

Հայաստանի կառավարությունը հումանիտար օգնություն է ուղարկում Լեռնային Ղարաբաղ, որն այս պահին գտնվում է ամբողջական շրջափակման մեջ Ադրբեջանի կողմից:

Հուլիսի 25-ին Հայաստանի կառավարությունը հայտնել էր, որ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամի կառավարման աշխատանքային խմբի հերթական նիստը, որի ընթացքում որոշումներ են կայացվել Լեռնային Ղարաբաղի բնակչությանը պարենային եւ բժշկական հրատապ հումանիտար աջակցության վերաբերյալ: Ադրբեջանն անցած տարվա դեկտեմբերից արգելափակել է Արցախը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Սկզբնական շրջանում միջանցքն արգելափակել էին, այսպես կոչված, բնապահպաններ՝ բնապահպանական կեղծ հիմնավորումներով եւ պահանջներով, իսկ միջանցքի երթուղին փոխելուց հետո Ադրբեջանն ապօրինի անցակետ տեղադրեց միջանցքում՝ խոչընդոտներ հարուցելով ազատ տեղաշարժի համար: Սկզբնական շրջանում միջանցքով որոշակի տեղաշարժ, այնուամենայնիվ, կար, ՌԴ խաղաղապահ զորակազմի միջնորդությամբ սահմանափակ քանակով մարդասիրական բեռ մտնում էր Լեռնային Ղարաբաղ, նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով բուժման կարիք ունեցող անձինք տեղափոխվում էին Հայաստան եւ հակառակ ուղղությամբ: Հունիսի 15-ից Ադրբեջանն ամբողջությամբ արգելափակել է Լաչինի միջանցքը: Արդեն 40 օր է՝ ոչ մի կիլոգրամ սնունդ Արցախ չի մտել:

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԱՌԵՎԱՆԳՎԱԾ ՀԱՅՐԸ

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՀՀ ֆինչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել ԱԺ նախկին պատգամավոր Խաչատուր Քոքոբելյանի հայրիկի առեւանգման գործով եւ այն ուղարկել է դատարան: Այն ֆինելու է դատավոր Սամվել Մարդանյանը:

Հիշեցնենք, որ այս դեպքով կոմիտեն մեղադրանք է առաջադրել ԱԺ նախկին պատգամավոր Սուրեն Մանուկյանին այն բանի համար, որ նա Արմեն Քամալյանի, Մուրադ Մուրադյանի, Թաթուլ Պողոսյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2022 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 07-ի սահմաններում, առեւանգել են Գրիշա Քոքոբելյանին եւ վերջինիս տեղափոխելով Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայր՝ մինչեւ 2022 թվականի օգոստոսի 2-ը պահել են նշված վայրում վարձակալած տանը եւ նույն օրը ազատ արձակել: Նշված ժամանակահատվածում՝ 2022 թվականի հուլիսի 29-ին, Գրիշա Քոքոբելյանի որդուց՝ Խաչատուր Քոքոբելյանից, հորն ազատ արձակելու դիմաց, շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի՝ 3000000 ԱՄՆ դոլար, որից փաստացի ստացել են 40000 ԱՄՆ դոլար՝ կրիպտոարժույթի տեսքով:

Արմեն Քամալյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Սուրեն Մանուկյանի, Մուրադ Մուրադյանի, Թաթուլ Պողոսյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2022 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 7-ի սահմաններում, առեւանգել են Գրիշա Քոքոբելյանին եւ վերջինիս տեղափոխելով Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայր՝ մինչեւ 2022 թվականի օգոստոսի 2-ը պահել են նշված վայրում վարձակալած տանը եւ նույն օրը ազատ արձակել: Նշված ժամանակահատվածում՝ 2022 թվականի հուլիսի 29-ին, Գրիշա Քոքոբելյանի որդուց՝ Խաչատուր Քոքոբելյանից, հորն ազատ արձակելու դիմաց, շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի՝ 3000000 ԱՄՆ դոլար, որից փաստացի ստացել են 40000 ԱՄՆ դոլար՝ կրիպտոարժույթի տեսքով:

Թաթուլ Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Արմեն Քամալյանի, Մուրադ Մուրադյանի, Սուրեն Մանուկյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2022 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 7-ի սահմաններում, առեւանգել են Գրիշա Քոքոբելյանին եւ վերջինիս տեղափոխելով Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայր՝ մինչեւ 2022 թվականի օգոստոսի 2-ը պահել են նշված վայրում վարձակալած տանը եւ նույն օրը ազատ արձակել: Նշված ժամանակահատվածում՝ 2022 թվականի հուլիսի 29-ին, Գրիշա Քոքոբելյանի որդուց՝ Խաչատուր Քոքոբելյանից, հորն ազատ արձակելու դիմաց, շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի՝ 3000000 ԱՄՆ դոլար, որից փաստացի ստացել են 40000 ԱՄՆ դոլար՝ կրիպտոարժույթի տեսքով:

Մուրադ Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Արմեն Քամալյանի, Սուրեն Մանուկյանի , Թաթուլ Պողոսյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2022 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 7-ի սահմաններում, առեւանգել են Գրիշա Քոքոբելյանին եւ վերջինիս տեղափոխելով Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայր՝ մինչեւ 2022 թվականի օգոստոսի 2-ը պահել են նշված վայրում վարձակալած տանը եւ նույն օրը ազատ արձակել: Նշված ժամանակահատվածում՝ 2022 թվականի հուլիսի 29-ին, Գրիշա Քոքոբելյանի որդուց՝ Խաչատուր Քոքոբելյանից, հորն ազատ արձակելու դիմաց, շորթմամբ պահանջել են առանձնապես խոշոր չափերի՝ 3000000 ԱՄՆ դոլար, որից փաստացի ստացել են 40000 ԱՄՆ դոլար՝ կրիպտոարժույթի տեսքով:

ՊԱՏՄԵԼ Է

ՄԱՀԱՑԱԾ ՆՈՐԱԾԻՆ ՈՒ ՄԱՅՐԸ

Իրավապահները շարունակում են երեկվանից վերահսկողություն իրականացնել մատուռի մոտ հայտնաբերված նորածին երեխայի հայրական տան մոտ: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններեի համաձայն՝ նորածին երեխայի մայրը գտնվում է հոգեբանական վատ վիճակում, ուստի կասկածներ կան, որ միգուցե կինը գնա ինքնասպանության, եւ վերահսկողություն են իրականացնում:

Երեխայի մայրը իրավապահ համակարգում պատմել է, որ ունի 4 երեխա՝ երկու տղա, երկու աղջիկ, տղաներից մեկը՝ 28, մյուսը 24 տարեկան է, իսկ աղջիկներից մեկը ամուսնացել է: Իր հղիության մասին անգամ չի հայտնել ամուսնուն եւ միշտ թաքցրել է ու որոշել է երեխային թողնել մատուռում՝ վատ զգալով իր տարիքի համար. չէ՞ որ 47 տարեկանում կրկին մայրացել է: Ի դեպ, մայրը այնպես է պատմել իր արարքի մասին, որ իրավապահներն անգամ լացել են:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իրավապահները փնտրում են Մատուռի մոտ հայտնաբերված նորածին երեխայի մորը: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իրավապահները հանել են տվյալներ, որ համայնքն ունի մոտ 2000 բնակիչ, ու այս պահին իրականացվում է մեծածավալ աշխատանք՝ պարզելու, թե համայնքի բնակիչներից ում տանն է հղի եղել: Ավելին՝ քննվում է նաեւ այլ վարկած, որ միգուցե հարակից գյուղից է եղել ծննդկանը:

Նկատենք, որ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություններ չկատարելը, որը առաջացրել է ծանր հետեանք եւ պատժվում է 1-4 տարի ժամկետով:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՊՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՆԵՐԿԱՅԱՆԱ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին թույլ կտան ներկայանալ ԱԺ քննիչ հանձնաժողով: Մեր այս տեղեկությունը հաստատեց նաեւ Դավիթ Տոնոյանի պաշտպան Սերգեյ Հովհաննիսյանը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթին օրերս Հակակոռուպցիոն կոմիտեում տեղի ունեցած դռնփակ նիստից, որտեղ քննարկվում էր ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի միջնորդությունը՝ ԱԺ քննիչ հանձնաժողով ներկայանալու մասին, մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, պարզ էր դարձել, որ միջնորդությունը անձամբ դատարանում ներկայացրել է ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը եւ պահանջել, որ իրեն առանց ձեռնաշղթաների կամ ԱԱԾ ուղեկցող խմբի դատարանը թույլ տա ԱԱԾ մեկուսարանից դուրս գալ եւ գնալ Ազգային ժողով, ինչը սովորաբար կիրառվում է կարճատեւ այցերի ժամանակ:

Դատավոր Վահե Դոլմազյանը նմանօրինակ դեպքերի համար ասել է, թե կալանավորին ԱԺ քննիչ հանձնաժողով ինչ կարգով պետք է թույլ տալ ներկայանալու. համապատասխան ընթացակարգ չկա:

Չնայած այս հանգամանքին՝ այդուհանդերձ երեկ պարզ է դարձավ, որ Տոնոյանը կներկայանա ԱԺ:

Հիշեցնենք նաեւ, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ Հակակոռուպցիոն դատարանը, ամենայն հավանականությամբ, թույլ կտա ՀՀ նախկին ՊՆ Դավիթ Տոնոյանին ԱԱԾ մեկուսարանից գնալ ԱԺ քննիչ հանձնաժողով եւ իր տեսածն ու լսածը հայտնել քննիչ հանձնաժողովին:

Բանն այն է, որ քաղաքական իշխանությունները բացատրել են դատարանին, որ քննիչ հանձնաժողովում քննվում է պետության համար կարեւորագույն հարց, ու թեեւ նախադեպ չկա, ամեն դեպքում, Դավիթ Տոնոյանի ցանկացած խոսքը կարող է լինել նոր քննության առարկա, եւ նրա ներկայանալը հանձնաժողով խիստ անհրաժեշտ է:

Ո՞Վ Է ՎՐԱԵՐԹԻ ԵՆԹԱՐԿԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ երեկ Բաղրամյան պողոտայում պարեկին վթարի ենթարկած «Մայբախ» մակնիշի մեքենան պատկանում է Կառուցապատողների հայկական ասոցիացիայի հիմնադիր եւ խորհրդի անդամ Վահե Պետրոսյանին, բայց վրաերթի պահին ղեկին եղել է Վահե Պետրոսյանի վարորդը:

Հիշեցնենք, որ երեկ Բաղրամյան-Պռոշյան խաչմերուկում բողոքի ակցիայի ժամանակ «Մայբախ» մեքենայի վարորդը վրաերթի էր ենթարկել պարեկային ծառայողներից մեկին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 78 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԸ՝ ՊԱՏՈՒՀԱՍ

Տավուշի մարզում սկսվել է 25-օրյա ռազմական վարժական հավաքների մասնակիցների հավաքագրումը: Նիկոլ Փաշինյանի, ՔՊ-ական իշխանության, Պաշտպանության նախարարության եւ Գլխավոր շտաբի նկատմամբ գրեթե ընդհանուր անվստահության պայմաններում սահմանամերձ մարզի տղամարդիկ չեն ցանկանում այդ հավաքների մասնակիցներ դառնալ: Ջինկոմիսարիատից նույնիսկ առաջարկներ կան այդ հավաքներին մասնակցել հրաժարվողներից ոմանց դատել, որպեսզի մյուս հրաժարվողներին դա դաս լինի: Դեռեւս Տավուշի մարզում վարժական հավաքներին մասնակցել հրաժարվողներից որեւէ մեկի հանդեպ դատ ու դատավճիռ չի եղել: Մինչեւ տարեվերջ նման 6 վարժական հավաք է լինելու:

ՀԱՄԱԼԲՈՒՄ՝ ՋՈՒ–ՈՒՄ

ՏՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը հայտարարում է 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության երկրորդ փուլը՝միասնական քննությունների արդյունքներով ընդունելության համար սահմանված նվազագույն շեմը չհաղթահարած եւ կուրսանտական կազմի շարքերը համալրել ցանկացող անձանց համար: Այդ մասին Տավուշի մարզպետարանը հայտարարություն է տարածել: Դիմորդները ռազմական համալսարանում պետք է անցնեն բժշկական հետազոտություն, հանձնեն գործնական քննություն՝ ֆիզիկական պատրաստությունից: Թեստային առաջադրանքների միջոցով կստուգվի նրանց ընդհանուր գիտելիքների եւ զարգացվածության մակարդակը: Երկրորդ փուլի ընդունելության վերջնաժամկետը 2023 թ. օգոստոսի 1-ն է: Մինչեւ 2018 թվականի թավշյա հեղափոխությունը Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան ընդունվելու համար մրցություն էր, քննություններից դրական գնահատական ստացած ոչ բոլորն էին ընդունում այդ ռազմական բուհ: 2018-ին իշխանության եկածները Ադրբեջանի հետ բանակցությունները ձախողեցին, բանակը պարտության տարան, կապիտուլյացիա ստորագրեցին, բանակի հեղինակությունը խարխլեցին, հիմա էլ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը համալրում են միասնական քննություններից կտրվածներով:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՆԱՆՑ ԳՈՒՄԱՐՏԱԿԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը հայտարարություն է տարածել այն մասին, որ այսուհետ կանայք նույնպես կարող են մասնակցել հայրենիքի սահմանների պաշտպանությանը՝ ծառայության անցնելով զինված ուժերի կանանց նորաստեղծ գումարտակում: Հայտարարության մեջ նշված է, որ պայմանագրային զինծառայողներ դառնալու համար կանայք կարող են դիմել Դիլիջան համայնքապետարան կամ զանգահարել տրված հեռախոսահամարին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավոր խորհրդական Համբարձում Մաթեւոսյանը 2022 թվականի հայտարարատու տարում ոչ մի եկամուտ չի նշել: Այնպիսի տպավորություն է, որ Փաշինյանը նախկին փոխվարչապետին իրեն խորհրդական է դարձրել, բայց չի վճարում:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է Փաշինյան-Մաթեւոսյան վեճերին: Նման մի վեճի պատճառով էլ Փաշինյանը Մաթեւոսյանին հրաժարականի դիմում գրել է տվել հենց հարսանիքի հաջորդ օրը: Փաշինյանի սրտով չի եղել Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ընտրությունները, որի ժամանակ գործող ռեկտոր Կարինե Հարությունյանը վերընտրվել էր, այնինչ պլանավորված է եղել, որ ընտրվելու է Նիկոլ Փաշինյանի ցանկալի թեկնածուն (ըստ երեւույթին՝ Լեզվի պետական կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը), սակայն չի ընտրվել: Ընտրություններին հաջորդել է Մաթեւոսյանի ինքնակամ հրաժարականը:

Մաթեւոսյանը հայտարարագրել է համատեղ սեփականությամբ մեկ բնակարան Երեւանում, որը ձեռք է բերել 2017 թվականին, երբ Հայաստանի ամերիկյան համալսարանի հումանիտար եւ հասարակական գիտությունների ֆակուլտետի կառավարիչ, ընդհանուր կրթության գծով խորհրդական էր: Մինչ այս պաշտոնը զբաղեցնելը Մաթեւոսյանը եղել է Ուկրաինայի Դոնեցկ քաղաքում ՀՀ պատվավոր հյուպատոսի խորհրդական, որից հետո էլ սկսվել է Մաթեւոսյանի խորհրդականի կարիերան: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 4 մլն 425 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները՝5 մլն դրամ եւ 20 հազար դոլար: Վարչապետի գլխավոր խորհրդականը որեւէ եկամուտ չի հայտարարագրել, սակայն 2021 թվականի եկամուտների եւ գույքի մասին հայտարարագրում Մաթեւոսյանը նշել է 15 մլն 490 հազար դրամ: Այդ ժամանակահատվածում խորհրդականը զբաղեցնում էր Արմավիրի մարզի մարզպետի պաշտոնը, որի համար ստացել է 12 մլն 780 հազար դրամ աշխատանքի վարձատրություն: Նույն թվականի նոյեմբերի ստանձնել է ՀՀ փոխվարչապետի պաշտոնը եւ ստացել 2 մլն 710 հազար դրամ: Իսկ փոխվարչապետ եղած ժամանակ նա ՀՀ Կառավարությունից աշխատանքի վարձատրության դիմաց ստացել է 21 մլն 306 հազար դրամ, բայց, որպես խորհրդական, որքան եկամուտ է ստացել եւ որքան է վարձատրվել՝ անհայտ է: Մաթեւոսյանի կինը՝ Անի Բունիաթյանը եւս ոչ մի ֆինանսական միջոց չի հայտարարագրել, սակայն 2021 թվականի եկամուտների եւ գույքի մասին հայտարարագրում կինը նշել է 700 հազար դրամ աշխատանքի վարձատրություն «ԼՈՒՍԻՏԵՔ» ՍՊԸ-ից եւ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից:

Ինչպես ստացվեց, որ գյումրեցի Մաթեւոսյանը, որ աշխատում էր Ամերիկյան համալսարանում որպես խորհրդական, 2018 թվականին դարձավ Արմավիրի մարզի մարզպետ: Նա այն նորելուկ քաղաքական գործիչներից էր, որ թավշյա հեղափոխությունից հետո յուղալի պաշտոններ ստանձնեց եւ մինչ այսօր տեղից տեղ տեղափոխվելով՝ վերջիվերջո հաստատվեց այնտեղ, որտեղ ՔՊ-ի հայրն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 18.08.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

Մեկնարկային գին՝1,626,794 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, Հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2161076:

Մեկնարկային գին՝1,310,473 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

Մեկնարկային գին՝564,859 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2140468:

Մեկնարկային գին՝474,481 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

Մեկնարկային գին՝691,952 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2430110:

Մեկնարկային գին՝2,089,978 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

Մեկնարկային գին՝629,819 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝20,088 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝150,664 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մ Մեկնարկային գին՝133,923 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝16,740 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մ Մեկնարկային գին՝11,718 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝40,177 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝ բավարար)

Մ Մեկնարկային գին՝50,221 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝16,740 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒ,անող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մ Մեկնարկային գին՝43,525 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 18 ՃՏՊ. 38 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԿՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵՆ ԹՈՒՆԵԼՆԵՐԸ

Հայաստանում նախատեսվում է 2024 թվականին հիմնանորոգել Դիլիջանի եւ Պուշկինի թունելները, որոնք կառուցումից ի վեր չեն հիմնանորոգվել, առկա են լուրջ ու բարդ խնդիրներ:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի՝ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում կազմակերպված՝ «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական տարբերակում ներկայացված բյուջետային ծրագրերի եւ դրանց կատարողական հիմնական ցուցանիշների վերաբերյալ քննարկմանն ունեցած ելույթից:

«Կարեւոր ծրագիր, որ հաջորդ տարի կյանքի կկոչենք, եւ բյուջեում նախատեսել ենք, մեր երկու խոշոր թունելների՝ Դիլիջանի եւ Պուշկինի թունելների շինարարությունն է: Այս տարի մրցույթն անցկացրել ենք, ընկերությունը կա, արդեն իրականացնում է նախագծման աշխատանքները: Այս թունելները կառուցումից ի վեր երբեք չեն հիմնանորոգվել, այլ պարբերաբար վերանորոգման աշխատանքներ են եղել: Եվ մենք հիմա միջազգային մրցույթով պատվիրել ենք նախագիծ, որ երկու թունելն էլ հիմնանորոգենք»,-ասաց Սանոսյանը:

Նախարարը նկատեց՝ վարորդներն անցնելիս միգուցե հիմնականում բողոքում են լուսավորության, կահավորման հարցերից, բայց մասնագիտական առումով այդ թունելներում շատ ավելի լուրջ ու բարդ խնդիրներ կան: Եվ հիմա պետությունը մտադիր է այդ թունելներում առկա խնդիրները լուծել, երկու թունելն էլ հիմնանորոգել 2024-ին:

Հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը հետաքրքրվեց՝ այդ ընթացքում, օրինակ, Դիլիջանի թունելը փակվելու է արդյոք. նախարարը դրական պատասխան տվեց: Նա նաեւ տեղեկացրեց, որ Ծովագյուղից դեպի Դիլիջան նախկին շրջանցիկ ճանապարհը պարբերաբար տեսքի են բերել, որոշ հատվածներ նորոգել են, փոսալցման աշխատանքներ են արել, որ այդ ճանապարհը փոխարինի թունելին շինարարական աշխատանքների ընթացքում:

Անդրադառնալով ավիացիոն ոլորտին՝ նախարարը նշեց, որ Եվրամիության ավիացիոն «սեւ ցուցակից» դուրս գալու գործընթացի առումով Հայաստանն ակտիվ փուլ է մտել, խնդիրների առնվազն կեսը լուծվել են:

Հաջորդ տարի նախատեսվում է ավիացիոն ոլորտին տրամադրել 1.6 մլրդ դրամ:

«Այս ոլորտում բավականին ակտիվ փուլ ենք մտել՝ սեւ ցուցակից դուրս գալու գործընթացի առումով: Եվ լուծել ենք մեր առջեւ եղած խնդիրների առնվազն կեսը, զբաղվում ենք մյուս կեսի լուծմամբ՝ վերապատրաստումներ, տարբեր գործընթացներ, որոնց համար նաեւ գումարներ են նախատեսված»,- ասաց Սանոսյանը:

Նախարարի գնահատմամբ՝ հիմա ոլորտը բավականին արագ զարգացման տեմպ ունի:

Հայկական ավիացիան Եվրամիության «սեւ ցուցակում» էր հայտնվել 2020 թվականի հունիսից: Արգելվել էր բոլոր հայկական ավիափոխադրողների մուտքը ԵՄ օդային տարածք:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 4

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԸ

Դարանակ գյուղին հարակից ափամերձ հատվածը դարձել է Հայաստանից եւ ավելի քան 30 երկրներից ժամանած ստարտափների, տեխնոդեմֆերի ու ներդրողների հանդիպման վայրը. Sevan Startup Summit-ը կրկին Սեւանում է:

Տեխնոլոգիական եւ կրթական ոլորտներին աջակցելու, նորարարական գաղափարները եւ ստարտափներին խրախուսելու նպատակով Team Telecom Armenia-ն միացել է ամենասպասված միջոցառմանը՝ որպես տեխնոլոգիական գործընկեր:

«Տելեկոմը գտնվում է տեխնոլոգիական ընկերությունների եւ սպառողների կենտրոնում՝ ապահովելով նրանց միջեւ անխափան կապը: Եթե տելեկոմը չլինի, այս ճանապարհին կառաջանան խցանումներ, իսկ տեխնոլոգիական ոլորտի զարգացում տեղի չի ունենա: Այդ նպատակով էլ համագործակցում ենք Sevan Startup Summit-ի հետ՝ ներկայացնելու Team Telecom Armenia-ի ծրագրերը եւ հասկանալու SS համայնքի խնդիրները»,- նշեց ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Կրթական ծրագիրը հագեցած է բիզնես աշխարհի փորձառու եւ հայտնի ներկայացուցիչների հետ դասախոսություններով, վորքշոփերով, մենթորինգի սեսիաներով, պանելային քննարկումներով, նեթվորքինգային հնարավորություններով եւ քննարկումներով:

Sevan Startup Summit-ի տնօրեն Վահագն Ռափյանը նշեց, որ իրենց նպատակը Հայաստանում ստարտափ էկոհամակարգի զարգացումն է: Նրա խոսքով՝ մայրաքաղաքից հեռու գտնվելը չի խանգարել տեղական ու միջազգային ստարտափ ընկերությունների ակտիվ մասնակցությանը. «Ունենք մասնակիցներ շուրջ 30 երկրներից, ինչը բավականին լավ ցուցանիշ է»:

Սամմիթին հատուկ խարույկի շուրջ քննարկումները՝ Campfire talk-երը նույնպես վերադարձել են. Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը մասնակիցների հետ զրուցեց Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտի պատմության ու տրանսֆորմացիայի, տեխնոլոգիաների զարգացման գործում տելեկոմ ոլորտի կարեւորության եւ ընկերության ապագա ծրագրերի մասին:

Միջոցառման ընթացքում անցկացվում է նաեւ միկրոաքսելերացիոն կրթական ծրագիր, որը ստեղծված է growth զարգացման փուլերում գտնվող ստարտափների համար:

Team Telecom Armenia-ի մասին

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ընկերությունը առաջին տելեկոմն է, որ իրականացնում է IPO Հայաստանում՝ դառնալով էլ ավելի բաց ու հանրային: Հանդիսանալով Հայաստանում հեռահաղորդակցության առաջին համակարգի ժառանգորդը՝ Team-ը ժամանակակից տեխնոլոգիանեորի հետ է համադրում առաջին կապի օպերատորի հարուստ փորձը. 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը որակյալ ինտերնետով կապահովի Հայաստանի բոլոր մարզերը:

Sevan Startup Summit-ի մասին

Սամմիթի պատմությունը սկսվել է 2016 թվականին: Մինչ օրս նախագծին մասնակցել են ավելի քան 25 000 մասնակիցներ՝ աշխարհի 50 երկրից: Միջոցառման մրցանակային ֆոնդը մինչ այժմ կազմել է 350 000 ԱՄՆ դոլար, իսկ նախագծի շրջանակներում կատարված ներդրումները հասնում են 4 միլիոն ԱՄՆ դոլարի: Սեւանյան այս ֆորումը լուրջ դերակատարում է ունեցել Հայաստանում ստարտափ էկոհամակարգի ձեւավորման եւ զարգացման գործում: Այն վերջերս ձեռք է բերել միջազգային համբավ եւ անցկացվել Արաբական Միացյալ Էմիրություններում եւ Հնդկաստանում՝ «Սիսայդ Ստարտափ Սամմիթ» անվան ներքո:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ 4

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Այգեձորի փողոց, թիվ 42 հասցեում գտնվող 495,6 ք.մ. բնակելի տուն, 0,03547 հա հողամաս եւ 0,0026 հա ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 325000000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Խնձորուտ թաղամաս, 2-րդ փողոց, 19/2 հասցեում գտնվող 313,2 ք.մ. վարչական մասնաշենք, 116,69 ք.մ. օժանդակ շինություն, 13,9 ք.մ. օժանդակ շինություն, 215,4 ք.մ. մարզական մասնաշենք, 225 ք.մ. պարիսպ եւ 1,3838 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 69000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 14.08.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՏԱՇԱՏԻ ԹԱՏՐՈՆԻՑ

Արտաշատի Ամո Խարազյանի անվան դրամատիկական թատրոնի եւ «Թանդիս» իրանական թատերախմբի համագործակցության արդյունքում հուլիսի 29-ին Արտաշատի թատրոնի բեմ կբարձրանան «Խոսրովի սիրո հեքիաթ-պատմությունը Շահրզադի համար» եւ «Զուգահեռ շրջան» ներկայացումները:

Բեմադրություններում ընդգրկվել են եւ՛ հայ, եւ՛ իրանցի դերասաններ:

Հուլիսի 24-ին լրագրողների հետ հանդիպմանը Արտաշատի թատրոնի տնօրեն Կամո Նաղդալյանը կարեւորեց երկու երկրների միջեւ մշակութային երկխոսությունը, որը հաջողվում է:

«Արդեն մեկ ամիս է՝ մեր դերասաններն աշխատում են իրանական կողմի դերասանների ու բեմադրիչների հետ, ինչի արդյունքում երկու ներկայացում կունենանք: Նախատեսում ենք հետագայում բեմադրություններով հանդես գալ թե՛ Հայաստանում, թե՛ Իրանում կայանալիք միջազգային փառատոններին»,-շեշտեց նա:

«Թանդիս»-ի տնօրեն Ֆաթիմեհ Աբդոլռահիմին, ներկայացնելով թատերախմբի ստեղծման պատմությունը, հիշեցրեց կորոնավիրուսի համավարակի մասին, որը մեծ վնասներ հասցրեց տարբեր բնագավառներին, այդ թվում՝ մշակույթին:

«Արվեստագետներով որոշեցինք հենց այդ պայմաններում զարկ տալ մշակույթին ու թատրոնին եւ 2022 թվականին, երբ Իրանում համավարակն իր գագաթնակետին էր հասել, ստեղծեցինք թատերախումբը, որը ճանաչում ձեռք բերեց Իրանում եւ հաջողություններ գրանցեց»,-ասաց Աբդոլռահիմին:

Մինչ օրս «Թանդիս»-ը 22 ներկայացում է խաղացել: Երկու բեմադրությամբ հանդես են եկել արտերկրում: Թատերախմբի նպատակներից է ոչ միայն պրոֆեսիոնալներին, այլեւ երիտասարդ սերնդին հարթակ տրամադրել՝ ստեղծելով սեփական դպրոցը:

Ներկայացումներից 17-ի բեմադրիչը «Խոսրովի սիրո հեքիաթ-պատմությունը Շահրզադի համար» պիեսի հեղինակ, ռեժիսոր եւ գլխավոր դերասան Համեդ Շեյխն է:

Նրա խոսքով՝ որոշել է բեմադրել հենց այդ պիեսը, քանի որ այն անմիջական կապ ունի ինչպես իրանցիների, այնպես էլ հայերի հետ: «Խոսրովն Իրանի արքան է եւ սիրահարվում է հայ արքայադուստր Շիրինին՝տեսնելով նրա նկարը: Սա հայ-իրանական պատմություն է՝ գեղարվեստական լուծումներով, որովհետեւ իրական պատմությունը շատ է տարբերվում գրական ստեղծագործությունից»,-պատմեց ռեժիսորը:

Իսկ «Զուգահեռ շրջան» պիեսի հեղինակ, ռեժիսոր եւ գլխավոր դերասան Մոջթաբա Զաֆարիփուրին հավաստիացրեց՝երկու պատմություններն իրարից շատ են տարբերվում: Նրա խոսքով՝ «Զուգահեռ շրջան»-ը այն մասին է, որ աշխարհը, որում մենք ապրում ենք, լի է անարդարությամբ, պատերազմներով, եւ բոլորս բախվում ենք այդ խնդիրներին ու ձգտում մեկ այլ աշխարհ ստեղծել, որն ավելի լավը կլինի: «Այդ մտորումներին, մարդու տառապանքներին է անդրադառնում պիեսը, եւ մենք փորձելու ենք հանդիսատեսին մասնակից դարձնել դրան եւ հույս արթնացնել, որ, վերացնելով չարը, կկարողանանք ավելի լավ մարդկանցով ու արդար աշխարհ ստեղծել»,-շեշտեց Զաֆարիփուրին:

Համագործակցության պրոդյուսեր եւ ՀՀ-ում «Թանդիս» խմբի ներկայացուցիչ Արմինա Սարգսյանն էլ շեշտեց՝ որոշել են աշխատել Արտաշատի թատրոնի հետ, քանի որ ցանկանում են ապակենտրոնացնել համագործակցությունն ու մշակութային իրադարձությունները, հաշվի են առել նաեւ այն հանգամանքը, որ առաջին թատերական ներկայացումը բեմադրվել է Արտաշատում:

Մամուլի ասուլիսի վերջում կողմերը համագործակցության հուշագրեր ստորագրեցին՝ ընդգծելով, որ ներկայացումների մուտքն ազատ է:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ՓԱՐԻԶՈՒՄ

Փարիզի 2024 թվականի ամառային օլիմպիական խաղերի մեկնարկին մնաց ճիշտ մեկ տարի: Հայաստանը 33-րդ ամառային օլիմպիական խաղերին դեռեւս ունի մեկ մասնակից՝ հրաձիգ Էլմիրա Կարապետյանը:

Փարիզի 33-րդ ամառային օլիմպիական խաղերը կկայանան 2024 թվականի հուլիսի 26-ից օգոստոսի 11-ը: Խաղերի բացման արարողությունը կլինի բացառիկ, քանի որ առաջին անգամն է, որ այն անցկացվելու է ոչ թե մարզադաշտում, այլ Ֆրանսիայի սրտում՝ Սեն գետի երկայնքով:

Փարիզը Լոնդոնից հետո երկրորդ քաղաքն է, որը երրորդ անգամն է հյուրընկալում Օլիմպիական խաղերը (1900, 1924, 2024): 33-րդ ամառային օլիմպիական խաղերի բացման արարողության օրը խորհրդանշական է, քանի որ 1924 թվականին խաղերի փակման արարողությունը կայացել է այդ օրը:

Հավաքականները բացման արարողությանը կմասնակցեն նավակներով: Փարիզի օլիմպիական խաղերում 32 մարզաձեւում կխաղարկվի 329 մեդալ, իսկ մասնակիցների թիվը կգերազանցի 10 հազարը: Այս Խաղերում նոր մարզաձեւ է լինելու՝ բրեյք դանսը:

Փարիզի օլիմպիական խաղերի մի քանի մարզաձեւերի մրցումներ կանցկացվեն Թահիթիում, Նանտում, Լիոնում, Մարսելում, Սենթ-Էթյենում եւ այլն: Այս խաղերում կաշխատեն մոտ 45 հազար կամավորներ՝ աշխարհի տարբեր երկրներից:

Փարիզի խաղերի կազմկոմիտեն ներկայացրել է նաեւ ՕԽ-ի թալիսմանին՝մասկոտին: Թալիսմանը, որը ստացել է Ֆրիգ (Phryges) անվանումը, նման է ֆրանսիական գլխարկների եւ ունի կարմիր գույն: Ֆրիգիական գլխարկը համարվում է ֆրանսիական հեղափոխության եւ ազատության խորհրդանիշ: Հիշեցնենք նաեւ, որ Փարիզի 33-րդ ամառային օլիմպիական խաղերի կազմկոմիտեն ներկայացրել է խաղերի փոխանցումավազքի ջահը:

Փոխանցումավազքի ջահը երեք գաղափար է կրում՝ հավասարություն, հանգստություն եւ ջուր:

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԱԿՈՒՄԲ

Հայաստանի բասկետբոլի ազգային հավաքականի խաղացող Գաբրիել Աճեմյանը տեղափոխվել է Բեյրութի «Հոմենեթմեն» ակումբ. այս մասին հայտնում է Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիան: «Հոմենեթմեն»-ը Լիբանանի հայ համայնքի կողմից մեծ սեր վայելող ակումբ է:

Այն հաջողությամբ հանդես է գալիս Լիբանանի առաջնությունում, իսկ 2018 թվականին դարձել է երկրի չեմպիոն:

Նշենք, որ Գաբրիել Աճեմյանը նախկինում հանդես է եկել Հայաստանի երիտասարդական հավաքականում, իսկ 2022 թվականին նշել է իր նորամուտը Հայաստանի ազգային հավաքականի կազմում եւ դարձել Եվրոպայի փոքր երկրների չեմպիոն:

ԺԱՄԱՆՑ

ՄԱՅՔԼ ՔՈԹԱՆՋՅԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Հուլիսի 26-ին դերասան, երգիչ Մայքլ Քոթանջյանի ծննդյան օրն է: Նա ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան Ռաֆայել Քոթանջյանի միակ զավակն է:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է Մայքլ Քոթանջյանի հետ:

-Պլանավորու՞մ եք նշել Ձեր ծննդյան օրը

-Երեխաներս գիշերը՝ ժամը 00:00-ին, տորթով սենյակ մտան երգելով: Դա ամենալավ նվերն էր ինձ համար: Ընտանիքի շնորհավորանքն ինձ համար ամենակարեւորն է: Այսօր երեւի ընտանիքով եւ մտերիմներով կհավաքվենք տանը, բայց, որպես այդպիսին, չեմ նշելու:

-Ամենավառ հիշողությունը ո՞րն է, որ ունեցել եք Ձեր ծննդյան օրերին, հետաքրքիր պատմություններ կա՞ն:

-Բոլորն էլ հետաքրքիր են եղել, մանավանդ այն ժամանակ, երբ հայրիկը կար, իմ կողքին էր, այդ ժամանակ շատ հաճելի էր: Ինքն առաջիններից էր, որ ինձ շնորհավորում էր, եւ ինձ համար դա ամենակարեւորն էր: Հիմա տխուր եմ այդ առումով, քանի որ ինքը չի շնորհավորել ինձ:

Հիշեցնենք, որ այս տարի՝ հունիսի 13-ին, ՀՀ ժողովրդական արտիստ Ռաֆայել Քոթանջյանի մահվան տարելիցն էր: Այդ կապակցությամբ Քաղաքային պանթեոնում տեղի էր ունեցել արտիստի հուշարձանի բացման արարողությունը:

ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍԻՄՈՆՅԱՆԸ ՁԱՅՐԱՑԵԼ Է

Ինչպես արդեն «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, երգչուհի, ոճաբան Անահիտ Սիմոնյանը, որն այս օրերին իր հանգիստն է անցկացնում որդու հետ Հունաստանում, շարունակում է հանրության ուշադրության եւ քննադատության կիզակետում մնալ: Այս անգամ սոցիալական ցանցի օգտատերերը երգչուհուն քննադատել են որդու՝ Արմանի երկար մազերի համար, ինչն Անահիտին զայրացրել է, եւ նա «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում պատասխանել է վերջիններիս:

«Առաջին եւ վերջին անգամ եմ գրում, որ հանգիստ թողեք երեխուս մազերը: Արմանն ինչ կուզի, ինչպես կուզի, կանի, ու ես իր կողքին եմ լինելու միշտ: Եթե ձեզ ձեր դեռահաս տարիքում թույլ չեն տվել ինքնահաստատվել եւ ինքնաարտահայտվել, դա բացառապես ձեր ծնողների բացթողումն է: Արմանի սանրվածքը բացառապես իր ցանկությունն է: Դիմում եմ բոլորին, ովքեր իրենց պարտքն են համարում Արմանի մազերի մասին կարծիք արտահայտել: Ձեր կարծիքը մեզ հետաքրքիր չի, եւ դուրս հրավիրեք ձեզ մեր էջերից: Զբաղվե՛ք ձեր եւ ձեր երեխաների սանրվածքով եւ դաստիարակությամբ»,- գրել է երգչուհին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● *Հուլիսի 28-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Մորաքույրը Փարիզից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՊԱՀՈՒՍՏ

ՀԱՐՑ. Ի՞նչ նպատակներով է օգտագործվում պետական պահուստը:

Հովսեփ Սարգսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետական պահուստը օգտագործվում է հետեւյալ նպատակներով՝

1. ապահովել Հայաստանի Հանրապետության զորահավաքային կարիքները,
2. արտակարգ իրավիճակների կանխման կամ դրանց առաջացման դեպքում ապահովել հնարավոր հետեւանքների նվազեցման ու վերացման, փրկարարական ու անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների եւ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը,
3. Հումքային եւ վառելիքաէներգետիկ պաշարների, ինչպես նաեւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին շուկայում պահանջարկի եւ առաջարկի միջեւ անհամամասնությունների առաջացման դեպքում պետական աջակցություն ցուցաբերել տնտեսության տարբեր ոլորտներին, կազմակերպություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԱԻՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական պահուստը նաեւ օգտագործվում է մարդասիրական օգնություն եւ պարենային ճգնաժամի դեպքում շուկայի վրա կարգավորող ազդեցություն ցուցաբերելու համար:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Հեղինակային իրավունքը կարո՞ղ է գրանցվել:

Թամարա Մամիջանյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակային իրավունքի պահպանությունը տրամադրվում է ավտոմատ կերպով եւ կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից եւ որեւէ այլ գործողության կատարումից, ուստի Մտավոր սեփականության գործակալությունը չի իրականացնում հեղինակային իրավունքի օբյեկտների գրանցման գործառույթ:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունք եւ հարակից իրավունքներ կրողների իրավունքների ապահովման նպատակով գործում են գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններ: Նման կազմակերպությունները ստեղծվում են ուղղակիորեն հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների տերերի կողմից եւ գործում են ստացված լիազորությունների շրջանակներում («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 63-64-րդ հոդվածներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Անհետ կորած զինծառայողների ծնողները երեք հերթական բողոքի ակցիան էին ացկացնում Բաղրամյան 26-ի՝ այժմ վարչապետի նստավայրի դիմաց:

Նրանք պահանջում են Նիկոլ Փաշինյանից պատասխան տալ՝ որտեղ են 2020 թվականից անհետ կորած իրենց զավակները:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 + 15 +26 + 31
Կոտայքի լեռներ	+10 + 14 +26 + 30
Կոտայքի նախալեռներ	+18 + 20 +30 + 33
Գեղարքունիք	+10 + 15 +24 + 28
Լոռի	+12 + 16 +24 + 27
Տավուշ	+15 + 20 +27 + 30
Արագածոտնի լեռներ	+10 + 13 +25 + 29
Արագածոտնի նախալեռներ	+17 + 21 +29 + 34

Արարատ	+19 + 22 +34 + 36
Արմավիր	+18 + 20 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+11 + 13 +26 + 28
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 +34 + 36
Սյունիքի հովիտներ	+16 + 19 +34 + 37
Սյունիքի նախալեռներ	+11 + 15 +24 + 27
ԼՂՀ	+16 + 20 +32 + 37
Երեւան	+18 + 20 +33 + 35

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.7.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*